

# Կրթա-դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

## 1. Դասարանի ընդհանուր բնութագիրը

1-ին դասարանում սովորում է 7 աշակերտ՝ 2 տղա և 5 աղջիկ: Սովորողները աշխատասեր են, ուշիմ և պարտաճանաչ: Դասարանում սովորողները համախմբված են: Բոլոր աշակերտների սոցիալական վիճակը գնահատվում է բավարար: Սովորողները դպրոց են հաճախում ճիշտ ժամանակին:

## 2. Ուսումնա-դաստիարակչական աշխատանքները ուստարվա ընթացքում

Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն սովորողների ակտիվության բարձրացմանը: Սովորողների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ՝ կարգապահություն, մաքրություն, համագործակցություն, փոխօգնություն:

## 3. Հոգևոր դաստիարակություն

Սովորողներին դաստիարակել հայ քրիստոնյային վայել վարք ու բարքով: Կազմակերպել էքսկուրսիաներ մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ, սովորեցնել տերունական աղոթքը, ծանոթացնել եկեղեցական տաղավար տոներին:

## 4. Գեղագիտական դաստիարակություն

Սովորողների մեջ դաստիարակել գեղագիտական ճաշակ, որին նպաստում են գեղեցիկ արվեստները՝ երաժշտությունը, գեղանկարչությունը և պոեզիան: Ծանոթացնել հայ դասական երաժշտության մեծերին, նկարիչներին և մանկագիրներին:

#### 4. Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Ծանոթացնել մեր հայրենիքի պատմությանը, մեր բանակի ստեղծման պատմությանը, մի շարք ազգային հերոսների և ֆիդայիների:

#### 5. Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակությունը պետք է նպաստի սովորողի առողջության ամրապնդմանը, օրգանիզմի կոփմանը, շարժողական հմտությունների տիրապետմանը, ինչպես նաև՝ հայրենիքի պաշտպանության նախապատրաստմանը:

#### 6. Աշխատանքային դաստիարակություն

Սովորողների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը, հոգ տանել դասարանը և դպրոցի բակը մաքուր պահելու մասին:

#### 7. Բնապահպանական դաստիարակություն

Սովորողների մեջ արթնացնել հոգատար և բարյացակամ վերաբերմունք դեպի կենդանի բնությունը, շրջակա միջավայրը: Ներկայացնել այն մարտահրավերները, որոնք այսօր ծառացած են Երկիր-մոլորակի առջև՝ օդի աղտոտվածություն, կանաչ տարածքների կրճատում, ջրային պաշարների նվազում:

#### 8. Դպրոց-ընտանիք կապը

Սովորողները պետք է հասկանան, որ ընտանիքը համարվում է պետության կորիզը: Պետք է մշտական կապ պահել ծնողական խորհրդի անդամների հետ, խոսել դասարանին հուզող հարցերի շուրջ, տեղյակ պահել սովորողների առաջադիմության և վարքի մասին;

## Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Ուսումն. շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը
1.	Եկեք ծանոթանանք	
2,	Իմ ընտանիքը	
3.	Ես դպրոցական եմ	
4.	Մենք անկախ Հայաստանի զավակներն ենք	
5.	Իմ սիրելի ուսուցիչը:Բացիկների պատրաստում	
6.	Մարդիկ և շրջակա միջավայրը	
7.	Փոքրից սկսիր,որ հասնես մեծին Աշխատանքը մայրն է ամեն բարիքի	
8.	Աշնան գույները	
9.	Մնունդ,առողջություն և անձնական հիգիենա	
10.	Անվտանգությունը տանը և դպրոցում	
11.	Մենք սովորում ենք ընկերություն անել	
12.	Մուլտֆիլմի դիտում և քննարկում	
13.	Երեխայի իրավունքներ	
14.	Ամանորյա հրաշք	

15.	Հայոց բանակի օր	
16.	Կոնֆլիկտների հաղթահարում	
17.	Թումանյանական շաբաթ	
18.	Ես սիրում եմ կենդանիներին Օգնություն ձմեռող թռչուններին	
19.	Իմ սիրելի հեքիաթը	
20.	Մայր իմ անուշ ու անգին Բացիկի պատրաստում	
21.	Մուլտֆիլմի դիտում և քննարկում	
22.	Բարև, գարուն Դասասենյակի նախապատրաստում գարնանը	
23.	Հանդուրժողականության ուսուցում Արդյունավետ հաղորդակցում և համագործակցություն	
24.	Լինենք բարեկիրթ Քաղաքավարության կանոնները	
25.	Հիշատակի օր. Մեծ եղեռն	
26.	Մեր հայրենիքը	
27.	Անվտանգ երթևեկության կանոնները	
28.	Միջոցառում. <<Հրաժեշտ այբբենարանին>>	
29.	Գրքերի զարմանահրաշ աշխարհը Ընթերցանության մրցույթ	
30.	Էքսկուրսիա Երևան	